«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ Գլխավոր տնօրենի

« 14 » նոյեմբերի 2025 թ. թիվ 440-25Լ հրամանով

«ԱՌՈՂՋ ՔԱՂԱՔԱՑԻ»

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ապահովադիր՝

Ապահովագրության պայմանագրի կնքման պահին և դրան նախորդող առնվազն 3 ամիս ժամանակահատվածում մշտապես վարձու աշխատող հանդիսացած ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձ:

Շահառու՝

Պայմանագրի կնքման պահին 63 տարեկանը չլրացած Ապահովադիրը կամ նրա՝ պայմանագրի կնքման պահին 63 տարեկանը չլրացած ընտանիքի անդամը (ամուսին, կին կամ երեխա):

Ապահովագրության տարածք՝ Հայաստանի Հանրապետություն

Ապահովագրության ժամկետ՝ 1 տարի

Ապահովագրավճար՝ 50.000 ՀՀ դրամ

Ապահովագրական գումար՝ 4.000.000 ՀՀ դրամ

Ապահովագրական հատուցում (ծածկույթ)

Ծածկույթի շրջանակներում հատուցման ենթակա բժշկական ծառայություններ.

ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ (ԱՄԲՈՒԼԱՏՈՐ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
1. Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, փափուկ հյուսվածքների վնասվածքներ, սալջարդեր և այլն) արտահիվանդանոցային պայմաններում իրականացվող բժշկական օգնություն և սպասարկում	100 % չափով
2. Արտահիվանդանոցային պայմաններում իրականացվող՝ հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները՝ 2.1. Էխոկարդիոգրաֆիա՝ դոպլեր հետազոտությամբ 2.2. Էզոֆագոգաստրոդուոդենոսկոպիա 2.3. Ռենտգենոգրաֆիա՝ ն/ե հեղուկ կոնտրաստավորմամբ, ներառյալ՝ կոնտրաստ նյութի արժեքը 2.4. Կոլոնոսկոպիա 2.5. Մամոգրաֆիա 2.6. Էլեկտրակարդիոգրաֆիա չափավորված ծանրաբեռնվածությամբ (տրեդմիլ-թեստ, վելոէրգոմետրիա) 2.7. Հոլտեր մոնիտորինգ 2.8. Ռադիոնուկլիդային ախտորոշման հետազոտություններ՝ երիկամներ, լյարդ, ոսկրեր, թոքեր և այլն	100 % չափով
2.9. Համակարգչային տոմոգրաֆիա, ներառյալ՝ կոնտրաստ նյութի արժեքը 2.10. Մագնիսական-ռեզոնանսային տոմոգրաֆիա, ներառյալ՝ կոնտրաստ նյութի արժեքը	50 % չափով
ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ (ՍՏԱՑԻՈՆԱՐ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
3. Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում՝ համաձայն ստորև նշված ծավալի՝ 3.1. Թերապևտիկ՝ բացառապես կյանքին վտանգ սպառնացող անհետաձգելի հիվանդանոցային բուժում պահանջող սրացումների և բարդությունների ժամանակ*, և վիրահատական բուժումը**	100 % չափով
3.2. Կետեր 2.9 - 2.10-ում թվարկված հետազոտություններ	100 % չափով***

* *Ընդ որում, հատուցման ենթակա չեն դրանց ենթասուր շրջանի բուժումը, ինչպես նաև մշտական, պահպանողական բուժումը և դինամիկ հսկողությունը:*

** *Բացառությամբ՝ բնածին, զարգացման արատներով և(կամ) այլ անատոմիական առանձնահատկություններով պայմանավորված վիրահատությունների, ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների ցանկում ընդգրկված ծառայությունների՝ բացառությամբ 3.3-րդ կետով նախատեսված դեպքերի:*

*** *Բացառությամբ՝ «Չհատուցվող դեպքեր» բաժնի 2.8 - 2.17-րդ և 3.1 - 3.5-րդ կետերում նշված դեպքերի:*

3.3. Նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող հետևյալ բժշկական ծառայությունները՝ ա. գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժում (ներառյալ միկրոկաթետրի, միկրոպարույրի և օնիքսի արժեքը) բ. կլիպսների օգտագործում՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ գ. շունտավորող համակարգերի օգտագործում՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ դ. էնդովասկուլյար ռեկոնստրուկտիվ բուժում՝ նյարդավիրաբուժական հիվանդությունների ժամանակ ե. խոշոր և պերիֆերիկ անոթների ստենտավորում, բալոնային դիլատացիա, անգիոպլաստիկա զ. սրտի բաց վիրահատություններ, աորտակորոնար շունտավորում է. սրտի փականների պրոթեզավորում ը. սրտի ռիթմը վարող սարքերի (Pacemaker) իմպլանտացիա թ. փորոքների կծկումները վերասինքրոնիզացնող ՍՌՎՍ իմպլանտացիա ժ. կարդիովերտեր դեֆիբրիլյատորների իմպլանտացիա ժա. լրացուցիչ անցուղիների կաթետրային աբլացիա ժբ. վերել և վայրէջ աորտայի վիրահատություններ՝ անկախ եղանակից	տարեկան համախառն՝ մինչև 2.000.000 ՀՀ դրամի չափով****
ժգ. սիներակի (Վ.Կավա/V.Cava) ֆիլտրի տեղադրում (ներառյալ՝ ֆիլտրի արժեքը), այդ թվում՝ ժամանակավոր ժդ. բացառապես վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ օգտագործվող մետաղական կոնստրուկցիաների՝ հարթակների, պտուտակների և շյուղերի կիրառում (այդ թվում՝ հարթակների, պտուտակների և շյուղերի արժեքը) ժե. քարափշրում (լիթոտրիպսիա)՝ հեռահար, պերկուտան, ուրեթերոռենոսկոպիկ ժզ. սկլերոպլաստիկա, կեռատոպլաստիկա	տարեկան համախառն՝ մինչև 1.000.000 ՀՀ դրամի չափով****
3.4. Կետ 3.3.-ում չընդգրկված պլանային վիրահատությունների համար	տարեկան համախառն՝ մինչև 500.000 ՀՀ դրամի չափով****
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ (ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
4. Տարեկան կանխարգելիչ բժշկական քննություն՝ հետևյալ ծավալով. 4.1. Ընդհանուր պրակտիկայի բժշկի խորհրդատվություն 4.2. Ուռոլոգի խորհրդատվություն	100 %*****

**** *Արժեքը ներառվում է բոլոր նախա- և հետվիրահատական հետազոտությունները, ակնաբուժության դեպքում՝ նաև ոսպնյակի արժեքը, իսկ ճողվածքների դեպքում՝ ցանցի արժեքը:*

***** *Նշված կանխարգելիչ բժշկական քննությունը կարող է կատարվել տարեկան միայն մեկ անգամ՝ բացառապես կից ցանկում նշված բժշկական կենտրոններից որևէ մեկում (ըստ Ապահովագրված անձի նախընտրության):*

4.3. Գինեկոլոգի խորհրդատվություն 4.4. Արյան ընդհանուր հետազոտություն՝ լեյկոֆորմուլայով 4.5. Խոլեստերինի որոշում արյան մեջ 4.6. Էլեկտրասրտագրություն (ԷՍԳ) 4.7. Որովայնի խոռոչի, փոքր կոնքի օրգանների և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն, կանանց համար՝ նաև կրծքագեղձի ուլտրաձայնային հետազոտություն	

Լրացուցիչ պայմաններ

Հիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկման դեպքում հատուցվում են՝

1. Բժշկական խորհրդատվությունները.

2. Հիվանդանոցային բուժման ընթացքում իրականացվող բոլոր լաբորատոր-գործիքային հետազոտությունները, այդ թվում՝ «Ապահովագրական հատուցում (ծածկույթ)» բաժնի աղյուսակի 2.1 - 2.10-րդ կետերում նշվածները: Ընդ որում՝ տվյալ հետազոտությունները չեն հատուցվում «Չհատուցվող դեպքեր» բաժնի 2.8 - 2.17-րդ և 3.1 - 3.5-րդ կետերում նշված դեպքերում.

3. Հիվանդանոցային բուժման ընթացքում նշանակված անհրաժեշտ դեղորայքի և բուժական միջամտությունների ծախսերը.

4. Անհատական հիվանդասենյակը՝ օրական մինչև 10.000 ՀՀ դրամի չափով (յուրաքանչյուր դեպքով ոչ ավել քան 5 օր):

Չհատուցվող դեպքեր

1. Հատուցման ենթակա չեն մինչ ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելը առաջացած դեպքերը, վիճակները, հիվանդությունները, որոնց գծով կատարված բժշկական միջամտությունները դեռ չեն ավարտվել կամ ունեն տրամաբանական շարունակություն: Սույն բաժնի 2-րդ կետում նշված հիվանդությունների, դեպքերի, բժշկական օգնության տեսակների, առողջական վիճակների, հետազոտությունների կամ այլ ծառայությունների գծով չեն հատուցվում թե՛ ախտորոշիչ, թե՛ բժշկական ծառայությունները՝ ներառյալ բժշկական խորհրդատվությունները (այդ թվում՝ արտահիվանդանոցային ցանկացած խորհրդատվություն), հետազոտությունները և դեղորայքային բուժումը:

2. Հետևյալ հիվանդությունները, դեպքերը, բժշկական օգնության տեսակները, առողջական վիճակները, հետազոտությունները կամ այլ ծառայությունները հանդիսանում են բացառություններ ապահովագրական հատուցման դեպքերից (ծածկույթից), և ապահովագրողը պատասխանատվություն չի կրում դրանց համար.

2.1. արտահիվանդանոցային բժշկական օգնությունը, սպասարկումը (այդ թվում՝ ստոմատոլոգիական, ակնաբուժական ծառայությունները): Սույն ենթակետում նշված բացառությունը չի վերաբերում վերոնշյալ «Ապահովագրական հատուցում (ծածկույթ)» բաժնի 1-ին կետով սահմանված դեպքերին.

2.2. այն հետազոտությունները, բժշկական միջամտությունները, բժշկական օգնության ու սպասարկման ցանկացած այլ ծառայությունները (ներառյալ դեղեր, բժշկական պարագաներ), որոնք չեն նշանակվել բժշկի կողմից և(կամ) մատուցվել են ապահովագրված անձի ցանկությամբ.

2.3. ծառայություններ, հետազոտություններ, դեղեր և(կամ) այլ բուժօգնության ծառայություններ, որոնք փաստացի չեն տրամադրվել ապահովագրված անձին.

2.4. նախազորակոչային կամ զորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային փորձաքննություն.

2.5. ֆիզիոթերապևտիկ միջոցառումներ և(կամ) բուժում, առողջարանային կամ վերականգնողական բուժում, ցանկացած պրոֆիլակտիկ և(կամ) կազդուրիչ միջոցառումներ և այլն.

2.6. ոչ ավանդական այլընտրանքային բուժում և ախտորոշման մեթոդներ, Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով չարտոնագրված դեղերի և(կամ) բժշկական պարագաների ձեռքբերում.

2.7. ալերգոդիագնոստիկա, սկարիֆիկացիոն փորձեր.

2.8. վերջույթների և(կամ) դրանց առանձին սեգմենտների պրոթեզավորումը, ինչպես նաև պրոթեզները, բժշկական սարքավորումները, իմպլանտները, տեսողական, լսողական սարքերը, այլ կարգավորիչ բժշկական հարմարանքները: Սույն ենթակետում նշված բացառությունը չի վերաբերում վերոնշյալ «Ապահովագրական հատուցում (ծածկույթ)» բաժնի 3.3 ենթակետով նախատեսված դեպքերին.

2.9. առողջության վատթարացումները (բացառությամբ վնասվածքների), որոնք առաջացել են ապահովագրված անձի կողմից ալկոհոլի, թմրանյութերի, թմրամիջոցների, թունավոր նյութերի կամ առանց բժշկի նշանակման դեղերի օգտագործման դեպքում կամ հետևանքով.

2.10. ժանտախտ, տուլարեմիա, սիբիրյան խոց, խոլերա, տիֆ, պոլիոմիելիտ, դրանց բարդություններ կամ հետևանքներ.

2.11. հոգեկան սահմանային վիճակներ (նևրոզ, փսիխոպաթիա, փսիխոզ և այլն), հոգեկան հիվանդություններ, դրանց հետևանքներ, հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս.

2.12. մանկաբարձական բուժօգնություն (ծննդօգնություն, հղիության ախտաբանություն, հղիների նախածննդյան և(կամ) հետծննդյան հսկողություն).

2.13. պարբերական հիվանդություն, տուբերկուլյոզ, թմրաբանական հիվանդություններ կամ ալկոհոլիզմ, թմրամոլություն, տոքսիկոմանիա.

2.14. առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բժշկական օգնության և(կամ) սպասարկման ծառայությունները.

2.15. ուռուցքաբանական հիվանդությունների քիմիաթերապևտիկ, վերականգնողական (այդ թվում նաև՝ առողջարանային) բժշկական օգնության և(կամ) սպասարկման ծառայությունները.

2.16. արյան արտաերիկամային մաքրում պահանջող հիվանդություններ, ներառյալ քրոնիկ երիկամային անբավարարություն (պլազմոֆերեզ, հեմոսորբցիա և այլն)՝ բացառությամբ սուր երիկամային անբավարարության դեպքերի, որոնց ժամանակ հատուցվում է արյան արտաերիկամային մաքրման ոչ ավելի, քան 4 սեանս.

2.17. ռեպրոդուկտիվ (վերարտադրողական) ֆունկցիայի և(կամ) էրեկտիլ դիսֆունկցիայի (իմպոտենցիա) հետ կապված հետազոտությունները և(կամ) բուժումը, դիսմենորեան, հակաբեղմնավորիչ միջամտությունները, այդ թվում՝ նաև ներարգանդային պարույրի (ՆԱՊ) տեղադրումը և(կամ) հեռացումը, այլ հակաբեղմնավորիչ միջոցները:

3. Ստորև նշված, ինչպես նաև ցանկացած այլ ոչ վիրահատական բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունները ենթակա են հատուցման բացառապես կյանքին վտանգ սպառնացող անհետաձգելի հիվանդանոցային բուժում պահանջող սրացումների և(կամ) բարդությունների ժամանակ, ընդ որում՝

հատուցման ենթակա չեն դրանց ենթասուր շրջանի բուժման, մշտական, պահպանողական բուժման և(կամ) դինամիկ հսկողության ծախսերը.

3.1. Բնածին անոմալիաներ, զարգացման արատներ և(կամ) այլ անատոմիական առանձնահատկություններ, ժառանգական, գենետիկ հիվանդություններ, էպիլեպսիա.

3.2. Մանկական ուղեղային կաթված, շաքարային դիաբետ, թոքերի քրոնիկ ոչ յուրահատուկ հիվանդություններ՝ թոքերի էմֆիզեմա, պնևմոսկլերոզ և այլն.

3.3. Ողնաշարի միջողային սկավառակների ախտահարումներ, ողնաշարի դեգեներատիվ դիստրոֆիկ փոփոխություններ (պրոթրուզիաներ, ճողվածքներ և այլն), օստեոխոնդրոզ, կեցվածքի խախտման շեղումներ, սկոլիոզ, կիֆոզ.

3.4. Աուտոիմուն հիվանդություններ, շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, պսորիազ, էկզեմա.

3.5. Լյարդային անբավարարություն, քրոնիկական վիրուսակրություն (այդ թվում՝ նաև վիրուսային հեպատիտները), քրոնիկական բացիլակրություն, քրոնիկական պարազիտակրություն:

Ապահովագրության կանոններ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի Առողջության կամավոր ապահովագրության կանոններ»

Կանխարգելիչ բժշկական քննություն անցկացնող բժշկական կենտրոններ

1. Աջափնյակ բժշկական կենտրոն – ք. Երևան, Աբելյան 8/1
2. Դալիմեդ բժշկական կենտրոն – ք. Երևան, Լեոյի 1
3. Դավիդյանց պոլիկլինիկա – ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, 33/3
4. էլիտ-մեդ բժշկական կենտրոն – ք. Երևան, Հ.Հակոբյան 3/15
5. Թիվ 4 պոլիկլինիկա – ք. Երևան, Մոսկովյան 13
6. Կապանի բժշկական կենտրոն - Սյունիքի մարզ, ք. Կապան, Մելիք-Ստեփանյան 13
7. Կրիոգեն Կլինիկա բժշկական կենտրոն – ք. Երևան, Վ.Փափազյան 29
8. Մեդէքսպրեսս բժշկական կենտրոն – ք. Երևան, Վ.Վաղարշյան 22
9. Մեդլայն Կլինիկ բժշկական կենտրոն – ք. Երևան, Ռոստովյան 17/1
10. Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն - Սյունիքի մարզ, ք. Մեղրի Գործարարների 42
11. Մեփլ Լիֆս հայ-կանադական բժշկական կլինիկա – ք. Երևան, Արմենակյան 129
12. Շենգավիթ բժշկական կենտրոն – ք. Երևան, Մանանդյան 9
13. Ռոյալ Կլինիկ ՍՊԸ - ք. Երևան, Ավան Սայաթ-Նովա թաղ. 8
14. Վարդանանց բժշկական կենտրոնի «Քոչար» մ/ճ - ք. Երևան, Հ.Քոչարի 35/1
15. Ցիտո բժշկական կենտրոն – ք. Երևան, Հ.Ներսիսյան 14/1